

Ավանդույթների գործառնական առանձնահատկությունները արդի
համաշխարհայնացման համատեքստում

Արդի աշխարհի հիմնախնդիրները ախտորոշվում են որպես համաշխարհայնացում: Որքանով է դա ճիշտ. արդյո՞ք իսկապես համաշխարհայնացումը նոր երևույթ է և թույլ է տալիս խոսել նախորդ դարաշրջաններից մեր դարաշրջանի արմատական տարբերության մասին, թե՞ սա պարզապես անցյալի կրկնությունն է: Այս հարցը վիճահարույց է և մտորումների տեղիք է տալիս: Ինստիտուցիոնալ փոփոխությունները, ինչպես նաև նորարարությունը հիմնականում վերաբերվում են հասարակական կառույցներին: Կյանքի մյուս ոլորտներում, ներառյալ առօրյա կյանքը, ավանդականը պահպանվել կամ փոփոխությունների ենթարկվելով հաստատվել է նորից: Այսօր կապված համաշխարհայնացման հետ, կյանքի ցանկացած ոլորտում փոփոխություններ են տեղի ունենում: Արևմտյան շատ երկրներում ոչ միայն հասարակական ինստիտուտները, այլև առօրյա կյանքը ազատվում է ավանդույթներից: Մյուս՝ ավելի ավանդապահ երկրներում տեղի է ունենում ավանդականացման գործընթաց: Արդի դարաշրջանը, որպես նորարարության դարաշրջան, կարծես վերջ է դնում ավանդույթներին: Բայց ավանդույթների վերջը չի նշանակում դրանց ոչնչացում, որի մասին երազում էին Լուսավորիչները: Ընդհակառակը, դրանք ձևափոխվում և նորանում են: Այսօրվա աշխարհում նորարարությունը չի սահմանափակվում միայն մեկ աշխարհագրական տարածքով, այն գոյություն ունի համաշխարհային մասշտաբով:

Համաշխարհայնացումը իրական և հեղափոխական ընթացք է, ավելի ճիշտ՝ մի քանի ընթացքների բարդ համադրություն: Այն ուղեկցվում է տարաբնույթ բախումներով: Հիմնական բախումը հանդուրժողականության և արմատականության միջև է: Այն հիմնախնդիրները, որոնք այժմ խնդրո առարկա են դառել, մտահոգում են ոչ միայն մեզ, այլև ամբողջ աշխարհին: Այս դարաշրջանը գիտության, տեխնիկայի և ինտելեկտուալ ռացիոնալիզմի դարաշրջան է: Ի հայտ են գալիս նորահայտ ռիսկեր, որոնց զգալի մասը կապված է էկոլոգիայի, գենետիկայի, ինժեներիայի և այլ համանման ասպարեզների հետ: Բնական է, որ զգացվում է որակական մեծ տարբերություն նախորդ դարաշրջաններից: Այսօր ևս նկատվում են ավանդության նկատմամբ մեծ հետաքրքրություն, ստեղծվում են նոր ավանդույթներ, ազգայնականությունը ձեռք է բերում արմատական բնույթ: Դա

համաշխարհայնացմանը հակազդելու բնական ընթացքներից մեկն է: Բայց համաշխարհայնացումը միշտ չէ, որ քայքայում է ավանդույթը: Նկատելով, որ արմատականությունը նոր և խոր անցյալ չունեցող երևույթ է, Է.Գիդդենսը հարց է տալիս. «արդյո՞ք հնարավոր է ապրել այնպիսի աշխարհում, ուր ոչինչ սուրբ չէ»¹: Համաշխարհայնացումը ոչ միայն դիպչում է ավանդույթներին, ազգային ինքնությանը, այլև փոխում է մարդու անձնական կյանքը: Փիլիսոփալուսավորիչները ելնում էին մի պարզ, բայց շատ համոզիչ սկզբունքից. որքան մեծանում են աշխարհը բացատրելու հնարավորությունները, այնքան մեծանում է պատմության ընթացքը սեփական նպատակներին ծառայեցնելու հնարավորությունները: Որպեսզի կառավարենք ապագան, պետք է ազատվենք անցյալի սովորույթներից: Կ.Մարքսը, որի տեսակետը մեծամասամբ հիմնված էր Լուսավորիչների տեսակետների վրա, այս սկզբունքը ձևակերպել է շատ պարզ բառերով՝ անհրաժեշտ է հասկանալ պատմությունը, որպեսզի այն կերտել: Ըստ մարքսիզմի՝ գիտության և տեխնիկայի հետագա զարգացումը աշխարհը պետք է դարձնե՞ր ավելի կարգավորված և հաստատուն: Շատ հասարակագետներ եկել են այն եզրակացության, որ այդ կարգավորված աշխարհում, որտեղ իշխում է սոցիալտնտեսական մեխանիզմը, մենք դառնում ենք այդ մեխանիզմի մի փոքր մասը: Այդպես էր մտածում նաև Մ.Վեբերը²: Բայց այն աշխարհը, որում հիմա ապրում ենք, այնքան էլ չի համապատասխանում նրանց կանխատեսումներին: Ժամանակակից աշխարհը դառել է ոչ թե ավելի կառավարելի, այլ դուրս է եկել հսկողությունից: «Անհետացող աշխարհ»: այսպես է այն անվանել Է.Գիդդենսը:³ Որոշ գործոններ՝ այդ թվում նաև գիտատեխնիկական առաջընթացը, մեր կյանքը ավելի որոշակի ու կանխատեսելի դարձնելու փոխարեն հարուցում են բացասական հետևանքներ: Մասնավորապես զլոբալ փոփոխությունները երբեմն վտանգավոր են դառնում շրջակա միջավայրի համար: Այս վտանգի դեմ հնարավոր չէ պայքարել առանց գիտության և տեխնիկայի: Բայց այդ վտանգների առաջացման համար երբեմն պատճառ են հանդիսացել հենց այդ գիտությունն ու տեխնիկան:

Մի կողմից՝ համաշխարհայնացումն անխուսափելի է, որովհետև համաշխարհային առևտրի զարգացումը, քաղաքական, տնտեսական և տեղեկատվական-մշակութային համաշխարհային փոխազդեցությունները

¹ Гидденс Э. Ускользающий мир как глобализация меняет нашу жизнь. М., Издательство «Весь мир», 2004, с.18.

² Вебер М., Избранное. Образ общества. М., 1994, с.34.

³ Гидденс Э. Ускользающий мир как глобализация меняет нашу жизнь. с.19.

իշխանություններին և ժողովրդին դրդում են ստեղծելու քաղաքական և տնտեսական կառավարման վերաբերական մեխանիզմներ: Մյուս կողմից՝ մարդկանց ավելի ու ավելի մեծ խմբեր և ազգեր գիտակցում են, որ համաշխարհայնացումը չպետք է դառնա տոտալ միասնականացման, ընտրանու անվերահսկելի իշխանության հաստատման պատճառ: Նոր երևույթները, որոնց հետ մարդկությունն առնչվում է 21-րդ դարում, չեն սպառվում քաղաքական և տնտեսական ոլորտների գործընթացներով: Գլոբալ հիմնախնդիրները առնչվում են նաև ժողովուրդներին և ազգերին: Այս գործընթացները ոչ միայն փոփոխում այլև ավելացնում, կրկնապատկում են ազգերի և պետությունների ներքին հիմնախնդիրները: Այս հիմնախնդիրների թվում կարելի է դասել համաշխարհային ընտրանու կողմից հրահրվող միջազգային, քաղաքական և սոցիալական լարվածությունները, հանցագործությունները, կոռուպցիան, բարոյական արժեքների թուլացումը և այլն: Ակնհայտ փաստ է, որ ժամանակակից համաշխարհային տնտեսությունը և միջազգային տնտեսական շուկան ձևավորում են մի նոր հասարակություն, ուր իշխանությունը պատկանում է համաշխարհային ընտրանուն:

Արդի քաղաքակրթությունը դարձել է արմատականության և աշխարհաքաղաքականության միջև պայքարի դարաշրջան: Համաշխարհայնացման դարաշրջանը տեղեկատվական դարաշրջան է: Այն հնարավորություն է տալիս շփվելու տարբեր մտածելակերպի և ապրելակերպի մարդկանց հետ: Պահպանողականները մշակութային բազմազանությունը համարում են վտանգավոր երևույթ, իսկ աշխարհաքաղաքացիները դա ընդունում են որպես բնականոն երևույթ: Անկախ այն բանից, թե խոսքը կրոնի, էթնիկության կամ ազգային ինքնության մասին է, պահպանողականները ելքը տեսնում են ավանդույթի մեջ: Համաշխարհայնացումը ելնում է այն կանխավարկածից, որ զ մարդկությունն այսօր ապրում է մեկ միասնական աշխարհում: Բայց արդյո՞ք դա այդպես է: Վերջին տարիներին շատ բանավեճեր են տեղի ունենում այս հարցի վերաբերյալ: Որոշ գիտնականներ պնդում են, որ անգամ գլոբալիզացիայի հասկացությունը կասկածելի է, քանի որ աշխարհը շարունակում է զարգանալ այնպես, ինչպես զարգացել է տարիներ շարունակ: Միջազգային տնտեսական կապերում, հատկապես առևտրի բնագավառում, նշանակալի տեղ է զբաղեցնում սահմանակից երկրների առևտրային փոխանակումները, որը չենք կարող անվանել համաշխարհային: Այս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ գլոբալիզացիան գաղափարախոսություն է: Այդ հասկացությունը ստեղծել են ազատ շուկայի գաղափարախոսները: Այն ինչ

տեղի է ունենում՝ հարյուրավոր տարիների անցյալի կրկնությունն է: Գիտնականների մեկ այլ խումբ համաշխարհայնացումն համարում են ռեալ երևույթ, միաժամանակ նշելով, որ նրա հետևանքները զգացվում են ամենուրեք: Համաշխարհային շուկայում գոյություն չունեն ազգային սահմաններ: Ժամանակակից միջազգային շուկայի մակարդակը ավելի բարձր է, քան անցյալում: Կարևոր տարբերությունը ֆինանսական ինտենսիվության և կապիտալի շարժի մեջ է: Արդի համաշխարհային տնտեսությունը կապված է «էլեկտրոնային փողերի» հետ. համաշխարհային տնտեսության շրջանակներում միլիոնավոր անհատներ, բանկեր, կազմակերպություններ համակարգչի միջոցով կարող են հսկայական կապիտալ փոխանցել աշխարհի մի ծայրից մյուսը:

Համաշխարհայնացումն ընդգրկում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական, մշակութային, արտադրական ոլորտները: Այնպիսի կարծիք է ստեղծվում, որ քաղաքական ոլորտում գլոբալիզացիան տեղական իշխանություններից խլում է լիազորությունները և դրանք տեղափոխում միջազգային մակարդակ: Անշուշտ գլոբալիզացիայի հետևանքներից մեկն էլ այդ է: Բայց այն բերում է հակառակ արդյունք՝ նոր պահանջներ է դնում տեղական ինքնավար կազմակերպությունների առջև: Այս առումով ամերիկացի սոցիոլոգ Ռանիել Բելլը նշում է, որ «ժամանակակից պետությունները շատ փոքր են մեծամասշտաբ հարցեր լուծելու համար և շատ մեծ՝ փոքր հիմնահարցեր լուծելու համար:

Թվում է, թե գլոբալիզացիան ազդում է միայն խոշոր ոլորտների վրա: Սակայն այն ներթափանցում է հասարակության նույնիսկ ամենափոքր օղակները: Աշխարհում տեղի ունեցող փոփոխություններից յուրաքանչյուրիս ավելի շատ անհանգստացնում են անձնական կյանքին վերաբերվող խնդիրները՝ ընտանիքը, ամուսնությունը: Ժամանակակից ընտանիքները կրում են համաշխարհային հեղափոխության ազդեցությունը: Շատ երկրներում, երբ խոսքը գնում է ընտանեկան արժեքների մասին, համաշխարհայնացումը կարծես ոչ մի կապ չունի դրա հետ: Բայց դա այդպես չէ: Աշխարհի տարբեր տարածքներում ավանդական ընտանեկան կառուցվածքները փոխակերպվում են: Անկախ հոգևոր սահմանափակություններից, ավանդույթներից, ընտանիքից, սոցիալական կապերից, մարդն իրեն ազատ է զգում: Նա չի կրում պատասխանատվություն այս ամենի առաջ: Նշելով անհատական յուրահատկությունների արժեքները, անհատի անկրկնելիությունը, ազատամիտ գաղափարախոսները առանձին մարդուն դարձնում են բարոյական հարցերի վերին աստիճանը և մարդուն ներշնչում են, որ «Դու կարող ես վերցնել այն,

ինչ ուզում ես»: Խորհուրդ են տալիս ոչ միայն վերցնել այն ամենը, ինչ պետք է, այլև՝ ապրելու կերպը⁴: Կտրվելով ավանդական կապերից և վարքի նորմերից, դեռահասը հոգևոր հենարան է փնտրում ոչ թե ընտանիքում, այլ ժամանակակից հասարակության մեջ:

Տարբեր երկրներում վիճահարույց հարց է դարձել սեռերի հավասարության և ապագա ընտանիքների կարգավորման խնդիրները: Հաճախ այդ խնդիրների լուծման տերբերակները հակասական են, որովհետև դրանք կրում են ազգային բնույթ: Օրինակ՝ Չինաստանում պետությունը մշակում է այնպիսի օրենքներ, որոնք դժվար են դարձնում ընտանիքների բաժանման գործընթացները, քան արևմտյան երկրներում: Այստեղ կոչ է արվում վերադառնալ ավանդական ընտանիքին: «Հաստատուն է համարվում այն ընտանիքը, որտեղ ամուսնությունից հետո կինն ու ամուսինը ապրում էին համատեղ, իրենց երեխաներով, կինը տնային տնտեսուհին էր, իսկ ամուսինը ընտանիքին կերակրողը: Ավանդական ընտանիքում ամուսնությունը միակ դրությունն է համարվում, որ այս կյանքի փուլերով պետք է անցնեն գրեթե բոլորը: Եվ թերահավատորեն են նայում նրանց, ովքեր չեն անցել այդ փուլով»⁵: Այժմ այս տեսակետը լիովին փոխվել է: Ամուսնությունը նշանակում է որ զույգերը ունեն հաստատուն հարաբերություններ, իսկ այն ամրացնում է այդ հարաբերությունները: Բայց այսօր ամուսնությունը համատեղ կյանքի գլխավոր պայմանը չէ: Ընտանիքում երեխայի ի հայտ գալը այսօր, ի տարբերություն անցյալի, հոգեբանական և զգայական պահանջումն է: Դրա հետ մեկտեղ աշխարհի շատ երկրներում երեխաների երեքից մեկը ծնվում է արտամուսնական կապերից, իսկ միայնակների թիվը կտրուկ աճում է: Ամերիկայում և Անգլիայում նախկինի նման ընտանիքներ կազմելը շատ մասսայական բնույթ է կրում, իսկ օրինակ Սկանդինավյան երկրներում մարդկանց մեծ մասը, որոնք ապրում են միասին և անգամ ունեն երեխաներ, չեն գնում պաշտոնական ամուսնության: Եվրոպայի և Ամերիկայի 18-35 տարեկան կանանց մեկ չորրորդը հայտարարում է, որ չեն պատրաստվում երեխաներ ունենալ: Այժմ ավելի հաջողակ ձևակերպում է «զույգերի ձևավորումը և խզումը» քան «ամուսնությունն ու ընտանիքը»: Որքանով հայտնի է, պատմության ոչ մի ժամանակաշրջանում չի գործել մի հասարակություն, որտեղ կինն ու տղամարդը ունենան հավասար իրավունքներ: Այսօր գերակայությունը տրվում է կնոջ տնտեսական ինքնուրույնության խնդրին: Հատկապես

⁴ Глобализация и моделирование социальной динамики. М.:-Институт социальных наук, 2001, с.89.

⁵ Сидиьменов В.Я. Китаи: страницы прошлого.М.,издательства «Наука», 1978, с.286.

երիտասարդության մեջ սկսում է աճել այն մտայնությունը, թե կինը պետք է առաջնահերթորեն կարևորի սեփական կյանքով ապրելու և տղամարդուց տնտեսական անկախություն ձեռք բերելու խնդիրը: Վերջինիս համեմատ ստորադաս կարևորություն է տրվում ընտանիք ունենալու, ամուսնանալու, մայրանալու ու երեխաներ ունենալու խնդրին: Այդ պատճառով էլ հեղափոխություն է տեղի ունենում նույնիսկ առօրյա կյանքում: Այսօր երիտասարդության շրջանում ձևավորվում է թուր պատկերացում, ըստ որի ավանդույթները նույնացվում են տիրազոր դոգմաների ու կարծրատիպերի հետ, որի հետևանքով ավելի ու ավելի արհամարհական վերաբերմունք է ձևավորվում ավանդույթների նկատմամբ: Անշուշտ սա սխալ մոտեցում է, քանի, որ ավանդույթները, նաև, սոցիալ-մշակութային տարրերի և փորձի փոխանցման միջոց են: Դեմոկրատիան, որպես նոր երևույթ պայքարում է պահպանողականության դեմ: Սեռերի իրավահավասար լինելը անհամատեղելի է ավանդական ընտանիքներում: Բայց այսօր ավանդական ընտանիքների պահպանումը անհանգստություն է առաջացնում Արևմտյան շատ երկրների համար: Սեռերի իրավահավասարությունը ոչ միայն կարևոր սկզբունք է դեմոկրատիայի համար, այլ անհրաժեշտություն է երջանիկ կյանքի համար: Սոցիոլոգիական հետազոտությունները, որոնք անց են կացվել ԱՄՆ-ում և Եվրոպայում, ցույց են տվել, որ ոչ բոլորն են ցանկանում վերադառնալ ավանդական ընտանիքի ամուսնու կամ կնոջ դերին: Այսօր ընտանիքներում ավելի ազատ սկզբունք է իշխում, նրանք ապրում են միմյանց հետ ոչ թե ճարահատյալ, այլ իրենց կամքով: Զգացմունքների ազատությունը զարգացող քաղաքական մշակույթի կարևոր տարրերից մեկն է:

Նոր պայմաններին մարդիկ և հանրությունները արձագանքում են իրենց նույնականության որոնումներով: Համաշխարհայնացումը պատճառ է հանդիսանում աշխարհի տարբեր երկրների տեղական մշակութային ինքնության համար: Օրինակ՝ շոտլանդացիները ավելի շատ ինքնության էին ձգտում Միասնական Թագավորության շրջանակներում: Համաշխարհայնացումը թույլ է տալիս հասկանալու թե ինչու՞ և ինչպե՞ս քայքայվեց նախկին Սովետական Միությունը: Սովետական միության պետական ատյանները, ծանր արդյունաբերությունը մրցակցության մեջ չէին կարող մտնել համաշխարհային էլեկտրոնային տնտեսության հետ: Հսկողությունը գաղափարախոսության և մշակույթի վրա, որի վրա ձևավորվել էր քաղաքական իշխանությունը, պարզապես չէր կարող չփլուզվել համաշխարհայնացման այդ դարաշրջանում:

Իհարկե համաշխարհայնացումը զարգանում է ոչ համաչափ, և դրա հետևանքները միշտ չէ որ դրական արդյունք են տալիս: Շատերի համար ցավազին է այն փաստը, որ այժմ ամեն ինչ «ամերիկանացվում» է: ԱՄՆ-ն իր տնտեսությամբ, մշակույթով, բանակով մնացել է իշխողը ամբողջ աշխարհում: Այն կապեր է հաստատում աշխարհի տարբեր զարգացած երկրների հետ: Համաշխարհայնացումը ստեղծում է «հաղթողների» և «պարտվողների» աշխարհ: Արդի պետություններին սպառնում է ռիսկի և վտանգի գործոնները: Խոսելով պետության, ընտանիքի, աշխատանքի, ավանդույթների մասին, թվում է, թե դրանք արտաքնապես նույնն են ինչ-որ անցյալում, բայց դրանք փոխվել են ներքնապես: համաշխարհայնացումը այսօր պատահական երևույթ չէ, այլ պայմանավորված է մի շարք գործոններով: Առաջին հերթին ռիսկի գործոնն է, որը լայն օգտագործվում է հասարակության մեջ իբրև ապագան կողմնորոշող գործոն: Այն առաջադրում է հասարակությանը խզելու կապերը անցյալի հետ, որը հանդիսանում է արտադրության զարգացման գլխավոր պայմանը նոր ժամանակների համար: Այնպիսի հին մշակույթ ունեցող երկրներ, ինչպիսիք Հռոմն ու Չինաստանն են, ապրում են անցյալի հիմքի վրա, պահպանելով ճակատագրապաշտության, աստվածահաճության սկզբունքները:

Հասարակության մեջ գործում է մի դինամիկ և մոբիլիզացնող ուժ, որը անվանում ենք ռիսկի գործոն: Ռիսկի գործոնն օգտագործելով ապագան չի թողնվում են կրոնի, ավանդույթների վրա, այլ ձգտում է ինքնուրույն որոշելու իր ապագան: Ռիսկի գործոնը կարող է լինել ներքին և արտաքին: Արտաքինը՝ կախված է չփոփոխվող ավանդույթներից և բնության օրենքներից, իսկ ներքինը՝ շրջապատող միջավայրի մեր ճանաչողությունն է: Ավանդական մշակույթներում, ինչպես նաև ինդուստրիալ հասարակությունում, մինչև վերջին ժամանակները մարդկանց անհանգստացնում էր այն ռիսկի գործոնը, որը կապված էր արտաքին աշխարհի հետ՝ անբերրիություն, ջրհեղեղներ, էպիդեմիաներ, սով և այլն: Սակայն վերջին ժամանակները սկսել է անհանգստացնել ոչ թե այն, թե բնությունն ինչ կարող է անել մեզ հետ, այլ այն, թե ինչ կարող ենք մենք անել բնության հետ: Արդի դարաշրջանը վտանգներով լի դարաշրջան է և այդ վտանգները մենք ինքներս ենք ստեղծում: Այսօր համաշխարհային ռիսկեր են կապված էկոլոգիայի, միջուկային զենքի տարածման, համաշխարհային շուկայի անկման հետ: Մյուս անմիջական անհանգստացնող ռիսկի գործոնները կապված են սննդի, առողջության, անգամ ամուսնության հետ:

Ավանդույթների դերի փոփոխման հետ մեր կյանքը ձեռք է բերում նոր դինամիկա: Նրան կարելի է առանձնացնել որպես երկընտրանք՝ ազատ գործողության և կախվածության միջև, մի կողմից աշխարհաքաղաքականության, իսկ մյուս կողմից պահպանողականության: Այնտեղ, որտեղ ավանդույթները ետ են մղվում, մեզ տրվում է ազատ և ինքնուրույն ապրելու հնարավորություն: Բայց այդ ազատությունը իր հետ բերում է նաև այլ հիմնախնդիրներ: Հասարակությունը, որը ապրում է ավանդույթների հակառակ կողմում, մարդուց պահանջում է ինքնուրույն որոշումներ, այդ թվում նաև առօրյա կյանքում: Այստեղ միաժամանակ տեղի է ունենում հետաքրքիր, բայց և վտանգավոր բան: »Կախվածության« առաջնային հասկացությունը վերաբերվում էր միայն ակոհոլիզմին և նարկոմանիային: Բայց այժմ այն կարող է վերաբերվել գործունեության ցանկացած ոլորտին: Մարդը կարող է այդպիսի կախվածություն ունենալ աշխատանքից, ֆիզկուլտուրայից, երաժշտությունից և այլն: Պատճառն այն է, որ կյանքի այս ոլորտները ավելի քիչ, քան անցյալում կարգավորվում են ավանդույթներով և սովորույթներով: Մարդը, որը կախվածության մեջ է ընկել, անցյալի ստրուկն է դառնում, մյուս կողմից էլ նա չի կարող խզել կապը սովորույթներից և ավանդույթներից, որը ընտրել է հոժարակամ: Երբ ավանդույթները կորցնում են իրենց ուժը և տիրում է ազատ ընտրության իրավունքը, սա չի կարող մարդուն չանհանգստացնել իբրև անհատի: Մարդն ավելի ակտիվ է դառնում և կազմավորում իր ինքնությունը: Կախվածության և ինքնուրույնության պայքարը համաաշխարհայնացման մի բևեռն է, իսկ մյուսը՝ տիեզերական աշխարհայացքի և պահպանողականության բևեռն է: Թվում է, թե պահպանողականությունը գոյություն է ունեցել միշտ: Բայց դա այդպես չէ: Այն ծագել և պատասխան է տալիս համաաշխարհայնացման ազդեցությանը:

Իմ կարծիքով ցանկացած հասարակություն ավանդույթների կարիք է զգում: Չի կարելի համաձայնվել այն կարծիքի հետ, որ աշխարհը ամբողջությամբ պետք է ձերբազատվի ավանդույթներից: Ավանդույթները անհրաժեշտ են, նրանք կգոյատևեն միշտ, քանի որ ապահովում են մշակույթի, փորձի փոխանցումը սերնդե-սերունդ: Վերցնենք թեկուզ գիտությունը: Յուրաքանչյուր գիտաաշխատող աշխատում է ելնելով ավանդույթների շրջանակներից: Յուրաքանչյուր գիտական ոլորտ ունի իր ավանդույթները: Ավանդույթները և գիտությունը միմյանց հետ համատեղվում են ամենահետաքրքիր և ոչ սովորական ձևով: Վերցնենք այսպիսի մի օրինակ, երբ 1995թ.-ին Հնդկաստանում, հնդուիստական տաճարներում որոշ աստվածների նկարների առջև կաթով լի բաժակներ են դրվել: Որոշ ժամանակ անց բաժակների

մեջ այլևս կաթ չի եղել: Այս երևույթը մեկնաբանվել է այնպես, թե իբրև աստվածները սկսել են կաթ խմել: Հենց այդ նույն օրը ոչ միայն Հնդկաստանում, այլ աշխարհի շատ երկրներում կաթով լի բաժակներ դրեցին աստվածային կերպարների առջև: Անտրոպոլոգ Դենիս Վիդալը այդ առիթով նշում է. «Հնդուիստական աստվածություններին, որոնք իրենց զգացնել են տալիս ամբողջ աշխարհում, որտեղ ապրում են հնդկացիները, հաջողվեց իրականացնել դարի առաջին հրաշքը, որը ապրում է գլոբալիզացիայի լոգունգի տակ»:⁶ Ավելի հետաքրքրեկան է մեկ այլ բան, թե ինչպես ոչ միայն հավատացյալները, այլ նրանք ովքեր չեն հավատում, կարևոր համարեցին անցկացնել գիտական հետազոտություն, պարզաբանում տալու համար կատարվածի վերաբերյալ: Այսպիսի օրինակները ցույց են տալիս, որ ավանդույթները ոչ միայն ապրում են այլ նորից ծնվում են: Բայց հաճախ ավանդույթները ետ են մնում ժամանակներից: Դրանք վերածվում են պատմական ժառանգության:

Բոլոր գործընթացները տանում են հավասարակշռության խախտման և նորից դրանց վերականգնման: Այսօր գիտական ոլորտ են մտել այնպիսի ֆունդամենտալ հասկացություններ, ինչպիսիք են կազմակերպություններն ու ինքնակազմակերպությունները, քառսը և կարգավորվածությունը, համակարգայնությունն ու համակարգային տարրերը, ուսուցման մոդելները: Մշակութային և քաղաքական շարժումները ձգտում են վերականգնելու հավասարակշռվածությունը կամ այն բարձրացնելու ավելի բարձր մակարդակի: Սոցիալական երևույթների ցանկացած մոդելավորում կասկածի տակ է դնում պատմական եղելությունը: Չկա համաշխարհային ամբողջ գործընթացի մոդելը, որով կարողանանք ցույց տալ այնպիսի սոցիալական գոյացությունների զարգացումը և աճը ինչպիսիք են շուկայական տնտեսությունը, լիբերալ քաղաքական կարգավորվածությունը, նոր պետությունների առաջացումը, կրթության համաշխարհային համակարգը, միջազգային տեռորիզմը և այլն:

Աշխարհը կտրուկ փոխվել է: Այն, ավելի քան երբևէ, դառել է փոխկապակցված: Միջազգային հանրության բնութագիրը այն չէ, ինչ եղել է անցյալում: Այն ընդհանուր խնդիրները, որոնց հետ մենք առնչվում ենք այժմ, նույնպես զբաղեցնում են ավելի լայն մասշտաբ, քան անցյալում: Աշխարհի շատ երկրներում կյանքը կորցնում է իր հարաբերական մշտականությունը և

⁶ Vidal, Denis. When the gods drink milk: empiricism and belief in contemporary Hinduism. South Asia Research, 1998, p. 18.

նախասահմանվածությունը: Հեղինակությանը անառարկելիորեն ենթարկվելու վրա հիմնված իշխանությունը չի համապատասխանում կյանքի նոր պայմաններին, այդ թվում նաև ճկունությանը և դինամիկությանը, ինչպես նաև գլոբալ էլեկտրոնային տնտեսությանը: Քաղաքական իշխանությունը, այլևս չի կարող հենվել հարգանքի և խոնարհման ավանդական գործոններին: Աշխարհը, որը հիմնված է տեղեկատվության ակտիվ փոխանցման վրա, իշխանությունը, որը գործում է միայն «վերևից», կորցնում է իր ուժը: Համակարգը, որը թվում էր ամենակարող, անհետանում է առանց հետքի: